

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԿԱՐԾԵԼ ԵՆ, ԹԵ Սասուն Միքայելյանին են բռնել

Մարինե
ԱՎԱՆԵՍՅԱՆ
marine@hraparak.am

Այրաքաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Գագիկ Ավետիսյանի նախագահությամբ, մայիսի 12-ին կսկսի մարտի մեկի փաստով կալանավորված Խաչիկ Գասպարյանի դեմ հարուցված քրեական գործի քննությունը: Խ.Գասպարյանը Մանվել Գրիգորյանի 5-րդ մոտոհրաձգային բրիգադի մարտիկներից է եղել եւ ԵԿՄ անդամ է: Արցախյան ազատամարտի մասնակիցը մեղադրվում է մարտի 1-ին ոստիկանության աշխատակցին դիմադրություն ցույց տալու եւ նրա նկատմամբ հարձակում գործելու մեջ: Մեղադրյալի պաշտպան Ամալյա Ավագյանն ասում է, սակայն, որ իր պաշտպանյալի նկատմամբ է բռնություն գործադրվել: Մեղադրական եզրակացությամբ, Գասպարյանին բերման են ենթարկել մարտի մեկի առավոտյան, ժամը 10-ի սահմաններում՝ Արշակունյաց պողոտայից: «Բերման ենթարկելիս ոստիկանները կարծել են, թե նա ԱԺ պատգամավոր Սասուն Միքայելյանն է (արտաքուստ շատ նման է Սասունին), եւ այդպես էլ ասել են՝ Ս. Միքայելյանին ենք բերման ենթարկում», - նշում է պաշտպան Ամալյա Ավագյանը՝ հավելելով, որ հետագայում, երբ իրավապահները հարցրել են իր՝ Գասպարյանի տվյալները, զարմացել են՝ լսելով միանգամայն այլ անուն-ազգանուն: Փաստաբանի խոսքով, նման շփոթմունքի պատճառը եղել է արտաքինից որոշակի նմանությունը: Տկն Ավագյանն ասում է նաեւ, թե բերման ենթարկելիս իրավապահները ծեծել են Գասպարյանին՝ կոտրել գլուխը, ապա տարել Կենտրոնի ոստիկանություն, որտեղ եւս բռնությունը շարունակվել է: Ավելի ուշ իր պաշտպանյալը տեղափոխվել է Երեբունու ոստիկանություն: «Կիրառված բռնությունների հետեւանքով Գասպարյանը ստացել է ողնաշարի վնասվածք, մատների կոտրվածք, գլխին էլ 8 կար են դրել», - ասում է փաստաբանը: Տկն Ավագյանի խոսքով, իր պաշտպանյալը չի ընդունում առաջադրված մեղադրանքը: Ավելին՝ հայտարարել է, թե նախաքննությամբ իր հետ առերեսված ոստիկանն իրեն բերման ենթարկողը չի եղել: